ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվ

Սպառողների վստահությունն աճել է 2023թ. երկրորդ եռամսյակում

Սպառողների գնահատականներն ընթացիկ իրավիճակի վերաբերյալ բարելավվել են: Սպասումները դրական են:

2022 թվականի չորրորդ եռամսյակից սկսած սպառողների վստահությունն ամրապնդվում է երեք եռամսյակ անընդմեջ: ՀԱՀ Սպառողների վստահության համաթիվն ընթացիկ եռամսյակում նախորդի համեմատ աճել է մոտ 4 տոկոսով (նախորդ տարվա համեմատ՝ մոտ 8 տոկոսով): Ցուցանիշն այժմ կազմում է 118.6 (վերջինիս արժեքը 2021 թվականի չորրորդ եռամսյակում 100 է): Այս բարելավմանը նպաստել են և՛ Ապագա իրավիճակի, և՛ Ներկա իրավիճակի համաթվերը: Ներկա իրավիճակի համաթվի ազդեցությունն այս եռամսյակում գերակշռող է՝ պայմանավորված ընթացիկ ֆինանսական վիճակի և ընդհանուր տնտեսական պայմանների վերաբերյալ սպառողների դրական գնահատականներով: Միաժամանակ սպառողները դրսևորել են գնումներ կատարելու նվազ ակտիվություն. գնումներ կատարելու ենթահամաթիվը նվազել է մոտ 7 տոկոսով:

Չնայած արձանագրված բարելավմանը՝ սպառողների վստահությունն ընթացիկ եռամսյակում դեռևս մնում է ցածր: Այն պայմանավորված է Ներկա իրավիճակի մնացորդով, որը գտնվում է 0,45-0,55 կայունության միջակայքից ցածր: Ինչպես նախորդ եռամսյակում էր, սպասումներն ընդհանուր առմամբ կայուն են. ապագա իրավիճակի մնացորդը կազմում է մոտ 0,48: Սպառողներն ունեն լավատեսական սպասումներ ապագա ֆինանսական հեռանկարների և զբաղվածության պայմանների վերաբերյալ: Միաժամանակ նշենք, որ մոտ ապագայում սպառողները խոշոր գնումներ կատարելու պլաններ չունեն:

Գծապատկեր 1. ՍՎՀ բաղադրիչների փոփոխությունը նախորդ ժամանակահատվածի նկատմամբ



Գծապատկեր 2. Սպառողների վստահության համաթիվ



Գծապատկեր 2-ն արտացոլում է սպառողների վստահության համաթվի վեց բաղադրիչների արժեքները և համապատասխան կայունության միջակայքերը՝ ներկայացված ստորին և վերին հավասարակշռության սահմանագծերով: Ստորին սահմանագծից ներքև և վերին սահմանագծից վերև գտնվում են համապատասխանաբար հոռետեսական և լավատեսական գնահատականները:

Սպառողների վստահության հարցման մեթոդաբանություն

Սպառողների վստահության հարցումն արտացոլում է սպառողների տեսակետներն ընթացիկ և ապագա տնտեսական իրավիճակի և հաջորդ եռամսյակի հավանական զարգացումների վերաբերյալ: Հարցման պատասխաններից դուրս բերված համամասնությունները հիմնված են սպառողի սուբյեկտիվ գնահատականների, ինչպես նաև ընթացիկ և ապագա գնումների վարքագծի վրա:

Սպառողների վստահության հետազոտությունը կազմվել է միջազգայնորեն ընդունված մոտեցման միջոցով, որը միավորում է երկու ենթահաշիվներ՝ ներկա իրավիճակի հաշվեկշիռ (հիմնված տնային տնտեսությունների կողմից իրենց ընթացիկ ֆինանսական վիճակի, գնումների վարքագծի և երկրի ներկայիս տնտեսական պայմանների գնահատման վրա) և ապագա ակնկալիքների հաշվեկշիռ (հիմնված սպառողների՝ կարճաժամկետ հեռանկարում ֆինանսական վիճակի, գնումներ կատարելու մտադրությունների և աշխատաշուկայի պայմանների վրա): Հետագա եռամսյակային միավորների փոփոխություններն այնուհետև ներկայացվում են որպես Սպառողների վստահության համաթիվ: Մեթոդաբանության տեղայնացման գիտական փորձարկումից հետո ՀԱՀ-ի Փոլ Ավետիսյան անվան Գործարարության հետազոտությունների և զարգացման կենտրոնը 2022 թվականից հարցումներ է հրապարակում Հայաստանում սպառողների ազգային ներկայացուցչական խմբին (պանելին) եռամսյակային սպառողների դինամիկ Սպառողների վստահության համաթվի հրապարակման համար: Հարցումները կատարվում են հեռախոսով՝ պանելի 2000-ից ավելի մասնակիցներից, որոնք ներկայացուցչական են ՀՀ համար սեռատարիքային և տարածքային (այդ թվում՝ գյուղական և քաղաքային բնակչության) տեսակետից: Որպես բազային արժեք մենք ընտրել ենք Սպառողների վստահության հաշվեկշիռը 2021 թվականի չորրորդ եռամսյակում:

Հարցերի համար, խնդրում ենք այցելել https://cbe.aua.am/cbrd/# , ինչպես նաև զանգահարել **+374 60 61 2607** հեռախոսահամարով: